



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱԴԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

MINISTRY OF NATURE PROTECTION OF THE REPUBLIC OF ARMENIA

HEAD OF STAFF

МИНИСТЕРСТВО ОХРАНЫ ПРИРОДЫ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

РУКОВОДИТЕЛЬ АППАРАТА

0010, ք. Երևան, Հանրապետության հր. Կառավարական 3-րդ տուն  
3 Government Bldg, Republic Sq, Yerevan, 0010, Armenia  
0010, Армения, г.Ереван, Дом правительства, здание N3  
Էլ.փոստ /E-mail/ эл.почта [min\\_ecology@mnp.am](mailto:min_ecology@mnp.am)  
Web page: [www.mnp.am](http://www.mnp.am)  
☎ (374 11) 818 520  
☎ (374 11) 818 506

№ 5/07.1/51934

<<02>> 06 2015թ.

Ապարանի <<Օրիոս>> կենտրոնի  
համակարգող տիկին Ն. Մանուկյանին

Հարգելի տիկին Մանուկյան

Ի պատասխան Ձեր 2015թ. մայիսի 18-ի գրության, հայտնում եմ, որ ՀՀ բնապահպանության նախարարության <<Շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիթորինգի կենտրոն>> ՊՈԱԿ-ը Գեղարոտ գետի ջրի որակի մոնիթորինգ իրականացնում է սկսած 1977 թվականից մոնիթորինգային երկու դիտակետում: Դիտակետերից մեկը տեղակայված է գյուղ Արագածից 0.5 կմ վերև, իսկ մյուսը՝ գետաբերանի հատվածում:

Համաձայն 2014 թվականի մոնիթորինգային տվյալների ջրի որակը գյուղ Արագածից 0.5 կմ վերև հատվածում <<լավ>> է և պիտանի է ոռոգման, արդյունաբերական և արտադրական ջրօգտագործման համար (համաձայն ՀՀ կառավարության 2011թվականի հունվարի 27-ի N75-Ն որոշման Հավելված 1), իսկ գետաբերանում <<միջին>>: Վերջին ցուցանիշը պայմանավորված է Գեղարոտ գետ կոմունալ-կենցաղային ջրերի ներհոսքով, ինչի արդյունքում ավելացել է ֆոսֆատի և ամոնիումի իոնների տոկոսը:

Գետի ջրի գունավորման պատճառների առանձին հետազոտություն չի կատարվել, սակայն ըստ մոնիթորինգային տվյալների գունավորումը պայմանավորված է երկաթի դեղնաշականակագույն միացությունների առկայությամբ, ինչը սակայն չի գերազանցում նորմը: Գյուղ Արագածից 0.5 կմ վերև ընկած հատվածում երկաթի միջին տարեկան կոնցենտրացիան 2010-2014 թվականների ընթացքում փոփոխվել է 0,2-0,9 մգ/լ տիրույթում: Գեղարոտ գետի ջրի որակը 2009-2014 թվականների ընթացքում էական փոփոխության չի ենթարկվել:

Հարգանքով՝  
Աշխատակազմի ղեկավարի Ժ/պ



Խ.Աղաբեկյան

